

## ԵՐԱՋՆԵՐԻ ԱՇԽԱՐՀՈՒՄ

### I

Մի բարձր սարի ստորոտում էի: Լիրայի լուսինը գուրս եկած սարի մի կողքից՝ կաթնանման լոյս էր սփռում չորս կողմս: Հրաշալի էր պատկերը. մուգ-դալար կանաչը ծածկում էր սարի ալիքաւոր, գեղազարական լանջն ու ստորոտը. վճիտ, սառնորակ գետը քչքչոցով գալարւում էր սարի տակով: Թարմ էր օդը, անուշահոտ՝ շրջակայքիս բուրմունքը: Ես, որ փոքրութիւնից բնութեան գեղեցկութեան սիրահար էի, այդ տեսարանների հրապուրանքով կախարդուած՝ նայում էի այս թումբին, դիտում այն թումբը, գետի քչքչոցն էր իմ լսողութիւնը քաշել, գրաւել, արծաթափայլ լուսինն էլ իր ֆանտաստիկական լուսով մի տեսակ սգեորութիւն էր ներշնչում՝ անյագաբար կլանել, դիտել շրջակայքս:

Նստեցի գետի ափին, սպիտակ, ողորկ քարի վրայ և կախարդուած նայում էի ջրի փրփրալից հոսանքին: Ըմբոստ գետը յամառութեամբ ոլոր-մոլոր ճանապարհ էր բացել իր համար. նա ծակել, տաշել էր քարեր, ապառաժներ և բոլորովին մօտեցել սարի ստորոտին, ասես թէ այժմ էլ մտադրութիւն ունէր իր տոկունութեամբ մաշել վիթխարի սարը: Ես ակնապիշ նայում էի գետին. այժմ լուսինը ուղիղ նայում էր ջրի երեսին. գետը հոսում էր, ինչպէս արծաթէ հալուածք, ուր

ծառերի կատարները ցողանում, համբուրում էին միմիանց հետ։ Ահա կայտառ ձկներն էլ իրանց պարը բռնեցին։ Գուրս ցատկեց ձուկը, ճկուն պոչով դարկեց լճացած ջրի երեսին և ներս սուզուեց իր աշխարհը, ահա երկրորդը, երրորդը ևս նրա օրինակին հետևեցին։ լուսնի լոյսը նրանց էլ գրաւեց։

Կարծես բնութիւնը, երկինքը, երկիր այդ ժամին ներշնչում էին միայն և միայն անմեղութիւն։ Եւ անմեղ կեանքը աչքիս առաջ պատկերացաւ իր կուսական մերկութեամբ։ Ես պարզ տեսնում էի նրան. հրաշալի կերտուած. մարմարից կտրուած այդ թարմ, թափանցիկ հողանի կուրծքն ու թևերը, վարդ շրթունքների վրայ խաղացող անմեղ ժպիտն ու սևորակ աչքերի խորհրդաւոր թարթելը ինչեք էին խոստանում անխօս... իսկ ամբողջ մարմնից խնկարկուտ դուրմունքը... Ահ, նրա թևերը, նրա նուրբ, քնքոյշ թևերը... նա տարածել էր դէպի ինձ, և ես կարծես մագնիսացած՝ գիմում էի դէպի նա... ես կախարդուած էի, ուզում էի անպատճառ ընկնել այդ բազուկների վրայ, և ես շնչասպառ վազեցի դէպի նա, ահա... և ընկայ... նա գրկեց, սեղմեց ինձ կրծքին, և ես նրա կրծքի անուշահոտութեան և դուրալի ջերմութեան ազդեցութեան տակ չիմացայ, թէ ինչպէս ինձ մի բոլորվին ուրիշ աշխարհում տեսայ, մի կախարդական աշխարհում, ուր թագաւորում էր համերայխութիւն, երջանկութիւն, գեղեցկութիւն և սէր։

— Ահա կեանքը, ահա թէ ուր պիտի մարդ պարի, ես չեմ հեռանայ այստեղից, կը մնամ ընդ միշտ այստեղ, ասացի թէ չէ, սարսափելի մի սուր ճիչ ինձ յանկարծ զարթեցրեց, և ես ինձ տեսայ նստած նոյն քարի վրայ՝ աչքերս ջրին յառած. բայց կարծես աչքերս մթնել էին. ես տրորեցի, ոյժ տուի աչքերիս՝ դարձեալ տեսնել վրճիտ ջուրը, էլ չը կարողացայ. նա պղտոր էր գալիս. մի քանի րոպէ... և նա արեան գոյն ստացաւ։ Փոխուեց ամենայն ինչ. բարձրացաւ ահեղագոյ հողմը. նա փչում, շառաչում էր ուժգին, հինաւորց ծառերը արմատա-

հան անում, ճեղքում, կտրատում և բերանն առած՝ դէս-դէն հալածում. թումբ, ժայռ, քար պոկում, իրարով էր տալիս. փոշին ծածկեց ամեն ինչ: լուսինը թագ կացաւ սև-սև ամպերի տակ, և խաւարը իր իշխանութեան տակն առաւ արար աշխարհ: Ահա կայծակը սարսափելի որոտով այս ու այն կողմից վիթխարի սարի կրճքին է խփում. նա լուռ ու մունջ պատուում, ճեղքում է և խուլ անքում այդ հարուածների տակ...

Արիւն... աչքերս ինձ խաբում են, սրտեզից է այդ արիւնը այս պահին: Ես այլայլուած վեր կացայ տեղիցս՝ աւելի մօտիկից տեսնելու. բայց ինչ եմ տեսնում. մարդու գլուխ քարերին զարնուելով՝ գալիս է դէպի ինձ... Բռնեցի այդ գլուխը, ջրից հանեցի, նոր կտրուած գլուխ էր: Ահա կտրուած ձեռք, ոտք, ահա մի ուրիշ գլուխ ևս, հանեցի և՛ այդ գլուխը, երկար մազերի ներկայութիւնը պարզ ապացոյց էր կնոջ գլուխ լինելուն: Փայլատակող կայծակի լոյսից տեսայ, որ ջուրը մուգ-կարմիր գոյն ստացաւ. արեան հոտը բարձրացաւ, և ես անդադար հանում էի գլուխներ և դնում գետի ափին:

Հանգարտուեց քամին. ամպերը դէս-դէն քաշուեցին. լուսինը նորից լուսաւորեց: Այժմ ընտելութեան պատկերը բոլորովին փոխուեց. արեան գոյն էր ստացել լուսինը, արիւն էին կաթում ծառերի գալկացած տերևները, արիւն էին թարթում և՛ աստղերը. արիւն... վիթխարի սարը լուռ վկայ էր արեան այդ տեսարանին:

Վերջացաւ. ջուրը այլ ևս գլուխներ չէր բերում: Ես յետ նայեցի և ինչ եմ տեսնում... գլուխների մի ահագին բլուր կոնաձև վեր բարձրացած: Հազարաւոր աչքեր միանգամից ինձ նայեցին, աչքեր կրակոտ, յանդիմանող, հազարաւոր բերաններ միանգամից բացուեցին և որոտացին. «Մեռիր և դու»: Ես լեղապատառ գետնին կպայ. նուազած, ընկած էի, զգում էի, թէ ինչպէս հետզհետէ մեռնում եմ. լսում եմ զանգակի տըխուր զօղանջիւն, տեսնում եմ ձիւնի պէս սպիտակ ու փայլուն հագուած աղջիկներ գլխակոյտի վրայով սա-

ւառնելիս, մերամաղձոտ, անուշ ձայնով մի ինչ որ երգ երգելիս: Հասկանում եմ այդ երգի իմաստը, նրանք պախարակում էին մարդկութիւնը, նրանք յանդիմանում էին ինձ:

Ուշքի եկայ, նայեցի գլխակոյտին, բայց ո՛վ սարսափ, դարձեալ հազարաւոր փայլատակող, խստահայեաց աչքեր ինձ նայեցին ու որոտացին. «Մեռիր և դու»:

— Ինչո՞ւ պիտի մեռնեմ և ես, ինչո՞վ եմ մեղաւոր, պատասխանեցի կերկերացող ձայնով:

— Դու պիտի մեռնես հէնց նրա համար, որ մենք էլ ենք մեռել:

— Բայց ի՞նչ կապ ունի ձեր մահը իմ կեանքի հետ:

— Հա՛... հա՛... հա՛... անմեղ մարդ, ծիծաղեց կծու կերպով գլխակոյտի կատարին դրած գլուխը. — ոչ մի կապ չես տեսնում քո կեանքի և մեր մահուան մէջ: Տեսայ, դու այնքան զգացուած, յուզուած էիր, որ աչքերիցդ արտասուքի տեղ արիւն կաթեց. բայց ի՞նչ արժէ քո արեան արտասուքը... գիտ՛ենք, դու մարդասէր ես և ապրում ես ինչպէս մի թռչնակ. սիրում ես թափառել այնպիսի վայրեր, ուր չը կայ նախանձ, ոխ, ատելութիւն, ուր չը կայ սով, սրածուլթիւն. սիրում, հրճուում ես՝ գեղեցիկը, բարձրը, վսեմը տեսնելով: Բնութեան, անշունչ բնութեան գեղեցկութիւնը, չքնաղ կոյսի աչերի թարթելը, նրա մետաքսէ վարսի ալիքաւոր իջուածքը քո կեանքը, քո ամբողջ կեանքն են խլում: Դու անմեղ երեխայի պէս օրերով ինքնամոռաց նայում, դիտում ես և չես կշտանում և դու քեզ արգարացնում ես, որովհետեւ ծնուել ես գեղեցկութեան սիրահար: Այդ է կեանքիդ նպատակը: Նայիր այստեղ, նայիր այս կոյտին, որ քո ձեռքերի գործն է, նայիր, դիտիր, հաւանո՞ւմ ես, գեղեցկութիւն ես տեսնում: Կուզենայիր իհարկէ, որ բոլորիս դէմքն էլ լուսնի պէս փայլէր, կուզենայիր իհարկէ՝ վարդ շրթունքներ, չը կայ... Դու զգում, զարհուրում ես մեզ նայելով: Նայիր, աչքերդ գետին մի գցիր, լաւ նայիր, տես, ի՞նչ ես տեսնում: Կարճ ես,

կարգան մեր աչքերի մէջ մեր կեանքի տխուր պատմութիւնը: Չեմ կարողանում, դու դողում ես, դու թուլանում ես, ինչո՞ւ գունատուեցիր, ի՞նչ պատահեց... չը լինի հասկացար... հա՛... հա՛... հա՛...

Անտանելի էր դրութիւնս: Այն ինչ՝ բարձրից ծիծաղում էր գլխակոյտի կատարին դրած գլուխը, իսկ մնացածները առամները կրճտացնելով՝ անէծք, հայհոյանք էին թափում գլխիս:

Յանկարծ սպիտակազգեստ աղջիկները երգելով ինձ շրջապատեցին և ձեռքերս բռնած՝ վեր բարձրացրին: Թռչում էի օդի մէջ, թռչում էին և՛ աղջիկները՝ չորս կողմս կտրած: Երկար չը քաշեց իմ օդային ճանապարհորդութիւնը, նրանք հասցրին ինձ վիթխարի սարի գագաթը և աներևոյթացան:

## II

Սարի գագաթը կլոր, հարթ տարածութիւն էր կազմում: Մշտական ձիւնը սառուցի ամբութիւն ունէր: Սպիտակ հարթութիւնը լուսնի տակ արծաթի նման փայլում էր: Կանգնեցի այդ կարծր ձեան վրայ և սկսեցի նայել չորս կողմս: Նոր աշխարհ, նոր տեսարաններ, բայց մի երկու բոպէ դեռ չէի նայել հեռու-հեռու տարածուած դաշտերին, սաղարթախիտ անտառներին, բլուրներին վրայ բարձրացած հինաւուրց վանքերին, յանկարծ աչքովս ընկաւ սարի ծերպին մի սևազգեստ մարդ՝ գլխաբաց, ծնկաչոր: Ես առանց մտածելու՝ մօտեցայ այդ մարդուն, նա ինձ չը տեսաւ, երևում էր՝ ինքնամոռացութեան մէջ ընկղմուած՝ անձնատուր էր եղած խորհրդաւոր մտածմունքների: Բայց ահա յանկարծ բարձրացրեց գլուխը, վեր ցատկեց տեղից և խիզախեց ահագին ոյժով դէպի այն կողմը, ուր նայում էր, բայց ձեռների ու ոտների շղթաների ձայնը միայն բարձրացաւ և աղմկեց խորհրդաւոր լռութիւնը: Նա ծնկների

վրայ ընկաւ, և ես պարզ լսում էի նրա սրտի խորքից դուրս բղխող զայրոյթը: Ես լուռ ու մունջ գիտում էի նրան, չէի ուզում խանդարել. նա նորից ինքնամոռացութեան մէջ ընկաւ, նորից նայեց հեռու և կատաղի յարձակում գործեց. բայց դարձեալ միայն շղթաների անախորժ ձայնը խախտեց մեռելային լուսթիւնը: Էլ չը կարողացայ համբերել, մօտեցայ շղթայուածին. նա ինձ տեսաւ թէ չէ, երեսը ծածկեց ու որոտաց.

— Հեռու աչքերիցս, ի՞նչ ես անում այստեղ, ո՞վ բերաւ քեզ այստեղ. հեռու, հեռու իմ ընակարանից:

— Խնդրում եմ, մի ծածկիր երեսդ, աստ, ո՞վ ես դու, ի՞նչ ես անում այս սառնամանիքում, ո՞վ է շղթայել քեզ, աստ, խնդրում եմ...

— Ո՞վ եմ ես, ողորմելի սարուկ, ահա, նայիր երեսիս, ճանաչո՞ւմ ես ինձ. չը ճանաչեցիր, հեռացիր, հեռացիր շուտով, մի խանդարիր ինձ:— Եւ նա կրկին մօտեցաւ սարի ծերպին:

Ես գիմեցի դէպի նա, ծնկաչոք աղաչեցի, պաղատեցի նրան ասել, պատմել՝ ով է նա և ինչ է անում այստեղ:

— Կանգնիր, այժմ բոլորը կիմանաս. այն օրից, երբ առաջին անգամ երկիրը ներս ծծեց անյագ կերպով ուժեղի ձեռքով թափուած թոյլի արիւնը, և այդ օրուանից, երբ գոյութեան կռիւը իր երկսայրի սուրը կախեց արարածների գլխների վրայ, ահա այդ օրից թոյլերի, տնանկների, անմեղ ընկճուածների միակ պաշտպանը հալածուած՝ շղթայուեց այս սարի դագաթին:

Նա լուեց, ճակատի վրայ թափթփած մազերը դէս-դէն արաւ, յուզուած նայեց հեռուն և խոր հառաչելով շարունակեց.

— Այժմ այս բարձրութիւնից տեսնում եմ, թէ ինչեր են կատարուում իմ աչքի առաջ այնտեղ...

— Բայց ի՞նչ է կատարուում այնտեղ հեռուն, ես չը գիտեմ:

— Չը գիտե՞ս... այժմ նայիր, որտեղ ես քեզ ցոյց կը տամ. տես, այնտեղ ի՞նչ է երեւում:

— Հրդեհ, այրում, կրակ են տալիս տուն-տեղ, այգի, դեղ...

— Էլ ի՞նչ ես տեսնում:

— Գիակներ... կոտորում են անխնայ, թալանում, քշում են տաւարը... գիւղացիք յետ յետ նայելով՝ փախչում են դէպի սարերը... ահա նրանց էլ հասան... կապոտեցին... քաջ են տալիս դէպի հրամանատարի վրանը...

— Ի՞նչ ես երեսգ դարձնում, այժմ նայիր դէպի սարի ձախ կողմը:

— Ահ, նայիր, նայիր, վազում են սարն ի վեր մայրերը՝ պինդ գրկած մանուկներին... նրանք փախչում են շնչասպառ... հասան զինուորները... կռիւ, կռիւ մայրերի ու զինուորների մէջ... Տես, տես, մի ձեռքով պինդ գրկած մանուկներին, միւսով սրերի դէմ են պաշտպանւում... խողտոզեցին մայրերին... փոքրիկները... սրերի ծայրերին անցրած... Ահ, ահ այն կողմը երեք մայրեր ինչպէ՞ս են փախչում, նրանք ժայռի ծերպին հասան... զինուորները վազում են նրանց յետևից... հասնելու վրայ են... ահ, նրանք մանուկներին պինդ գրկած՝ նետուեցին սարի անդունդը... Խնդրում, աղաչում եմ, այլևս չեմ կարող տանել, էլ մի ցոյց տուր ինձ...

— Կռիր, վատահոգի, չէ, երբ սկսել ես, պիտի վերջացնես ամենայն համբերութեամբ. այժմ նայիր սարի աջ կողմը. ինչո՞ւ ես դողում, ասա, այնտեղ ի՞նչ են անում. ինչո՞ւ ես պապանձուել:

— Զինուորները... զինուորները շրջապատել են բոլոր աղջիկներին, սրերը ձեռներին՝ երկիւղ են տալիս... Այն ի՞նչ են անում մի քիչ հեռու սպաները, գնդապետները, չեմ հասկանում, սրերը հանած՝ վիճում, չարանում են միմիանց վրայ՝ արիւնոտ աչքերը այս ու այն աղջկան վրայ դրած...

— Շարունակիր, նրանք վիճակ են գցում ամենագեղեցիկներին:

— Ահ, ահ անշատեցին մնացածներին չորս-հինգ հոգու... տարան... Տես, տես, մնացածները ինչպէ՞ս են

կուտում... նրանք չեն վհատուում, խփում, խածնում են զինուորներին: Խողխողեցին մէկին... գլուխը ձողի վրայ անցրին... երկխղ են տալիս նրանց ևս նոյն օրին հասցընել... աղջիկները գլուխները երկարացրին... նրանք խընդրում են իրանց ևս գլխատել... Զինուորները յարձակում գործեցին. ինչպէս են քաշկուտում աղջիկներին... ինչպէս են երեք-չորս հոգի մէկի վրայ ընկած՝ չարչարում, տանջում... Շատերը անչնչացան, նուազած ընկան, փռուեցին գետնին... Ահ, էլ չեմ կարող շարունակել, թող, թող ինձ՝ վայր նետուեմ այստեղից և ազատուեմ այս...

— Շարունակիր նայել առանց ախ ու վախի, առանց արտասուքի, դու դեռ շատ քիչ բան ես տեսել: Այժմ նայիր գիւղի այն ծայրին, ուր կրակը դեռ չէ հասել, ասա, այնտեղ ինչ են անում այդ խղճից բաժին ունեցողները...

— Շրջապատել են մի տուն. հանեցին այդտեղից մէկին կապոտած. տես, ինչպէս են անպատուում, ինչպէս են թքում նրա երեսին. որքան երեխաներ, պատանիներ դուրս տարան՝ նրա յետևից լացուկոծ անելով. կարծես աշակերտներ լինեն, իսկ կապուածը նըրանց ուսուցիչը: Ճանջում են նրան, միսը ունելիքներով պոկում... շիկացած երկաթով դաղում... պահանջում են նրանից մի ինչ որ բան. նա լուռ է, ոչինչ չէ պատասխանում: Ահա նրան վայր գցեցին, կապերը քանդեցին, ստներն ու ձեռները պինդ բռնած՝ սրում են դանակը... ահ, նրան ուզում են մաշկել, կենդանի մաշկել... էլ բաւական է, հանգիստ թող ինձ, կարծես ցնորում եմ, գլուխս ուզում է տրաքուի, էլ չեմ կարող շարունակել. թող, թող ինձ, ես ինչ անեմ, ինչ կարող եմ անել մենակ:

— Ինչ անես... մենակ ոչինչ չես կարող անել... Բայց սպասիր, ինչ եմ ասում. կարող ես մոռանալ քո անձը, քո եսը, բարձր դասել հասարակական շահերը քո շահերից. կարող ես քեզ զոհ բերել ուղիղ սրտով քո

ընկճուած եղբօր իրաւունքների համար և կը մոռանան այն ժամանակ պատկներ, դափնիներ, արձան, աստ, շուտով պատասխանիր, կարող ես:

— Ես ուրքան ինձ ճանաչում եմ, իմ խաղաղ կուլտուրական գործունէութեան ժամանակամիջոցին հետեւել եմ քո պայմաններին և կատարել եմ բառ առ բառ, և այժմ համարձակ կարող եմ ասել՝ կարող եմ:

— Կ'ունենան տոկունութիւն, ինչպէս ջրի կաթիլը, որ սպառածն է ծակում շանցնում:

— Այո՛:

— Եթէ այդպէս է, կտրատիր ուրեմն շղթաներս և ...

Ես իսկոյն և եթ շղթաների վրայ ընկայ, բայց այդ ամուր, հաստ շղթաները ինչո՞վ պիտի կտրատէի, սառուցից ու ձիւնից դատ ոչինչ չը կար. ես չը վհատուեցի, առայ այդ ժանգոտ մետաղը բերանս և ատամներովս սկսեցի նրա մի օղակը մաշել: Ձգում էի, որ ատամներս փշրուեմ, կտրատուեմ են, բերանս արիւնով լցուել է արդէն, բայց առանց ուշք դարձնելու՝ ամենայն տոկունութեամբ մաշում էր շղթան:

— Բաւական է, էլ հարկաւոր չէ, այժմ կարող ես գնալ. գնա՛, առանց յետ նայելու գնա՛, ...

Խօսքը դեռ չէր վերջացրել, որ դարձեալ ինձ տեսայ գլխակոյտի առաջ կանգնած: Այժմ էլ ես չէի դարհուրում, սարսափում՝ նրանց նայելով, գլուխները էլ չէին հայհոյում ու անիծում ինձ, այլ լուրջ՝ ինձ էին նայում և կարծես բաւական էին ինձանից:

— Գնա՛, գնա՛, էլ մի մնար... ձայն տուաւ գլխակոյտի կատարի վրայ դրած գլուխը, և նոյնը երկրորդեցին միաբերան միւս բոլոր գլուխները:

— Գնա՛, գնա՛, էլ մի սպասիր, գնա՛, գնա՛, էլ մի ուշանար... Երգում էին անուշ ձայնով սպիտակագգեստ աղջիկները:

Աչքերս բացի, արևը բաւականին բարձրացել էր. սովորականից աւել էի քնել: Պառաւ մայրս մահճակալիս մօտ կանգնած՝ ահ ու դողով ինձ էր նայում՝ կարծելով թէ հիւանդացել եմ: Վեր ցատկեցի տեղիցս, նրան մտքով վերջին համբոյրս տուի և նոր ոյժերով, նոր յոյսերով դուրս եկայ տնից...

Ս. Մ.-ՉԱՀՆԱԶԱՐԵԱՆ